



ԱՒԵՏԱԲԵՐ

Բ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 10 ՄԱՐՏ, 1929

ԹԻՒ 5

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ԿՐՕՆՔԻՆ ՀԻՄՇ (4)

Զգացում եւ Կոսիֆ

Պէտք է խորհիլ թէ ընթացքը, որուն կը հեռանայ կրօնքին հիմին մասին զրուած այս յստիւածաշարքով, կամայական կամ երեւակայական է: Գրծւած ընթացքը կը ներկայացնէ եւրոպայի մէջ անցեալ դարուն իրապէս առնուած իրերայաջորդ քայլերը քրիստոնեայ միւծ խորհողներու կողմանէ: Այն յայտնի դժուարութիւնները որոնք կը ծագին հեղինակութիւնը, բանականութիւնը, կամ բարոյականութիւնը կրօնքի իրը հիմնը դնելէ, քրիստոնեայ էն խորհողները սա համոզումին առաջնորդեցին թէ կամ ուրիշ հիմ մը պէտք է գտնուի, կամ անկրօն փիլիսոփայութիւնը յաղթող պլաի հանգիստնայ: Ոմանք յայտարարեցին թէ այս նոր հիմը զգացումն է: Զգացումով մենք մեր բարձրագոյն վիճակին կը հասնինք եւ Աստուծոյ հետ կը միանանք:

Ամէն տեղ այս գաղափարէն մաս մը կը գտնուի: Երաժշտական ձայները մարդերու վրայ մասնաւոր ազդեցութիւն մը կ'ունենան, փարատելով վտխիւր, փափկացնելով կարծր սիրտերը,

սրբացնելով փափաքները: Եղիսէ մարգարէ նուազածու մը կանչեց, երբ իրմէ խնդրեցին որ Աստուծոյ կամքը հասկնայ եւ յայտնէ: Հին եկեղեցիներու մէջ եղանակով ընթերցումներն ու աղօթքները, եկեղեցական նուազարաններու զարմանալի ազդեցութիւնը, եռանդով երգուած կրօնական երգերու ժողովուրդին վրայ թողած տպաւորութիւնը, բոլոր ասոնք կը նշանակեն թէ զգացումը կրօնական ազդեցութիւն մ'ունի: Քրիստոնէութեան մէջ եւ անկէ դուրս կրօնական ընկերակցութիւններ ծոմապահութեամբ, մտակեղծութեամբ եւ ասոնց նման ուրիշ միջոցներով կը բարձրացնեն կրօնական զգացումները, ասոր ատականձը միտդիքական յափշտակութիւն կը փորձէ, որուն մէջ զգացումով ինքզինքը Աստուծոյ մէջ սուգուած կ'զգայ: Իսլամ տէրվիշները իրենց պարերով եւ ուրիշ միջոցներով կ'աշխատին նման զգայական ազդեցութիւններ յառաջ բերել: Գերման փիլիսոփայ Շէլլինկ միտդիքական զգացումը կրօնքին հիմն նկատեց, մերժելով բանականութիւնը եւ բարոյականութիւնը:

Ուրիշ մէկ կողմէն ալ կրնանք այս գաղափարը հաստատել: Մարդիկ կան որոնք յաճախ կ'առարկեն արթնութեան հաւաքոյթներուն դէմ, ըսելով թէ ասոնց

նպատակն է մարդերու զգացումները զրկել և զանոնք զգացումով զործելու մղել: Եւ չիտակ է որ թէ՛ անհատական և թէ՛ հասարական կրօնական արթնութեան կ'ընկերանայ զգացումը: Բայց հարցը սա է, այս զգացումն է հիմը:

Շատ լուրջ դժուարութիւններու մէջ կը ձգէ մեզ այն զաղափարը՝ թէ կրօնական կեանքը զլիաւորապէս զգացումէ կը բաղկանայ եւ թէ կրօնքի ճշմարիտ հիմը անոր մէջ կը գտնուի:

1. Զգացումը արդիւնք մ'է: Այն ուրիշ պատճառի մը արտագրութիւնն է: Կրօնքին հիմը վերջնական պատճառ մը պէտք է ըլլայ, և ոչ թէ այսպիսի պատճառի մը արդիւնքը:

2. Զգացումը փոփոխական է: Ան երբեմն զօրաւոր, իսկ երբեմն ակար է: Հանգստացած մարդու մը եւ յոգնած մարդու մը, հիւանդի մը և առողջի մը, նոյնիսկ տարբեր խտնուածքով զօրաւոր եւ առողջ մարդերու զգացումները նոյնը չեն: Եթէ կրօնական կեանքը զգացումէ կը բաղկանայ, տեւական եւ հաստատուն բան մը չպիտի ըլլայ այն, այլ փոփոխական:

3. Եթէ մէկը կրօնական կեանքը զգայական վիճակի մը հետ միացնելու սովորութիւնը ունի, իր հաւատքը կորսնցնելու կը միտի երբ իր զգացումը կը կորսնցնէ: Խորհելով որ իր առաջուց ունեցած զգացումը ա'լ չունի՝ կը կարծէ թէ ա'լ ինքը քրիստոնեայ չէ: Իր ուրախութիւնը եւ հանգիստը կորսնցնելուն պատճառը մեղք մը կրնայ ըլլալ: քրիստոնէական կեանքէ իյնալուն նշանը զգացում չէ այլ մեղք է:

4. Այսպիսի կացութիւն մը շատ լուրջ հանգամանք կ'առնէ այն պարագային՝ երբ մէկը իր խաղաղութեան կորուստին և իր մեղքին միջև գտնուող կապակցութիւնը տեսնելու կարող չէ: Ժողովներուն կը յաճախէ ան՝ յուսալով վերադառնի իր կորսնցուցած զգացումը,

կամ ան կը կարծէ թէ աններկի մեղքը զործած է, և կամ անծանօթ պատճառով մը Աստուծոյ տհաճութեան մէկ զոհը եղած է, և պէտք է սպասէ մինչեւ որ Աստուծոյ բարեհաճի իր խաղաղութիւնը վերահաստատուի: Այս փորձառութիւնը երեւակայական չէ, և այսպիսի մէկը չի գիտեր թէ ինչպէս ելք մը գտնէ:

5. Կրօնական զգացում ունենալու ձգտիլ գերազոյն սովորութիւն մը կըրնայ ըլլալ: Մէկը կրնայ կրօնական ժողովներու յաճախելով կամ անձնագրութեամբ հաճոյալի կրօնական զգացումի հետեւ ըլլալ, մոռնալով Աստուծոյ ընկելու համար իրեն յանձնած զործը կամ չհասկնալով իրականին մէջ իր ինչը ընելը:

6. Անոնք որ քրիստոնեայ չեն կ'առաջնորդուին խորհելու թէ քրիստոնեայ ըլլալու համար տեսակ մը զգայական փորձառութիւն մը պէտք է ունենան: Եթէ զգացում չկայ կրօնք չկայ:

7. Այն տեսակէտը թէ կրօնքը զգացումի վրայ հաստատուած է՝ հիմնովին սխալ կեդրոն մը կրնայ ունենալ: Ես նկատառու եմ անձիս զգայական մէկ վիճակին մասին: Աստուծոյ չէ առանձնաբեր: Մէկը այսպիսի ներքին կեանքի մը կապանքներէն ապաստիլէ վերջ էր որ իր մասին և իր հոգեւոր փափաքներուն մասին այսպէս գրեց. «Առաջ օրհնութիւնն էր զոր ես կը փնտռէի, բայց հիմա Տէրը ինքն է զոր կը փնտռեմ»:

Ճ. Է. ՄԵՐԸԼ

ԲԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ

ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՆ

Ներկայիս Հայ Առաքելական Եկեղեցիի գերագոյն հարցը եղած է բարեկարգութիւնը, որուն իմաստին, և կարելւորութեան և միջոցներուն մասին իրարմէ մեծապէս կը տարբերին «Փարոս», «Սիւն», «Հրեղէն Սիւն», «Հայ Խօսնակ»

և «Ազատ Եկեղեցի» կրօնական պարբերութիւնները: Թերթերու մէջ այս հարցին հետեւող կոնտրառութիւնը ընթերցողին համար զիւրին է տեսնել սա ուրախալի պարագան՝ թէ մասնաւոր կարեւորութիւն տրուած է Ս. Գրքի տարածման համար ժողովրդային խաւերու մէջ և մանաւանդ ընտանիքներու մէջ. և նոյն խկ առաջարկուած է «Փարոս» կողմանէ Հայ Առաք. Եկեղեցւոյ կողմանէ ճանչցուած աշխարհաբար Ս. Գրքի մէկ նոր թարգմանութեան ձեռնարկել, անգոհացուցիչ նկատել Հայ Աւետ. Եկեղեցւոյ կործանած աշխարհաբար Ս. Գրքը: Բայց որչափ որ կարելի է ըսել բարեկարգութեան հարցը ընդհանրապէս ծիսական և շատ քիչ անգամ ալ վարդապետական գիտնի վերայ վիճաբանութեան առարկայ եղած է, երբեմն նկատի առնելով անոր հոգեւոր ըլլալու հանգամանքը:

Վերջին մէկ դարու միջոցին Հայութիւնը՝ տարբեր խոզովակներու միջոցաւ շփում ունենալով արեւմտեան քաղաքակրթութեան հետ՝ գաղափարային մեծ յեղաշրջումի ենթարկուեցաւ: Հայուն քաղաքական, կրթական, ընկերային, իմաստասիրական, կրօնական ըմբռնումները և աշխարհահայեցքները մեծ փոփոխութեան ենթարկուեցան, որուն իբր արդիւնքը հայ կիսաքին մէջ տիրող կարգերուն դէմ սաստիկ դժգոհութիւն և երբեմն ընդվզում և բաղխումներ յառաջ եկան: Զարգացեալ հայուն մէջ ընդհանրապէս տիրող մտայնութիւնը եղաւ չղիտականութիւն կամ սկիզբակութիւն, երբեմն անհաւատութիւն, նիւթապաշտութիւն և բիրտ ոյժի պաշտում: Մեր վերջին 40 տարուան զրահանութիւնը լաւագոյն արտայայտութիւնն է այս տխուր իրականութեան: Մէկ խօսքով հայուն միտքը լուսաւորուեցաւ, բայց հոգին խուսաբեցաւ: Այսօր հայ կիսաքին մէջ պարզուած ողբալի

տեսարանները, եղբայրասպան ոճիրները, անբարոյականութիւնն ու այլասերումը այս մտայնութեան արդիւնքներն են: Ուսումնասանջ հայը արհամարհեց կրօնքը և մերժեց քրիստոնէութիւնը:

Հայ կրօնական գաղափարը ազատ չմնաց այս գաղափարային շարժումին ազդեցութիւնէն: Անգլիախօս երկիրներու, Ֆրանսայի և մանաւանդ Գերմանական համալսարաններու մէջ ուսում առած, ուէ մէկ կերպով քիչ թէ շատ արեւմտեան գաղափարներու հետ շփում ունեցած հայ կղերները իրենց կրօնական ըմբռնումներուն մէջ մեծ փոփոխումներ կրեցին: Հայ կղերին քրիստոնէութիւնը, ծիսական և վարդապետական շատ մը ըմբռնումները մեծապէս չեղիլ սկսան նիկիոյ մէջ զբւարած ուղղափառ դաւանանքէն: Այս իրողութիւնը յայտուն մէկ ապացոյցն է ներկայիս Հայաստանի մէջ ծաւալող ազատ եկեղեցական շարժումը, որ կը յաւակնի Հայց. Եկեղեցւոյ բարեկարգել բանապաշտ հիմի մը վրայ:

Հայաստանէն դուրս գտնուող հայ եկեղեցականութեան կրօնական ըմբռնումին մասին կը բաւէ յիշել երկու մէջրերումներ: «...Հայ Եկեղեցականութեան մէջ անկրօնութիւնը սարսափելի համեմատութիւններ առած է: Այս տողերը զրոյր անձամբ կը ճանչնայ քահանաներ և բարձրաստիճան եկեղեցականներ որոնք մտերմական խօսակցութիւններու մէջ իրենց իսկական գոյները դուրս տուած և զարմանքով հարցուցած են թէ յիշատի մինք կը հաւատա՞նք կրօնքի:» Փարոս 1928, թիւ 3, էջ 54: «Կ'ըսեն թէ ինք (ակնարկելով երուսաղեմի Պատրիարքին) միշտ հիացող մը եղած է թերահաւատ Ռընանի և իր աշակերտներուն ալ ժառանգ թողած է այդ մարդուն գաղափարները, այսինքն Տէր Յիսուսի Աստուածորդի չըլլալը: և արդիւնքը մէջտեղն է: Այսօր

չունինք Բրիտանացիներ հայ Եպիսկոպոսներ: Եթէ Բարկէն Սրբազանի սըրտին մէջ գտնուած պուտ մը անկեղծութիւնն ալ չըլլայ, կամ Գարեգին Եպս.ի քչիկ մը մօտիկութիւնը Տէր Յիսուսի, խեղ չկայ հայ Եկեղեցականութենէն:» Հրեդէն Սիւն, 1929, թիւ 1, էջ 294: Ահա այս է հայ եկեղեցականութեան պատկերը, զոր թունդ հայ Առաքելականներ կը գծեն, որոնց համեմատ հայ եկեղեցականութիւնը բանապաշտ է իր կրօնական կեանքին և միջնորդութեան մէջ:

Հայերու մէջ ժ.թ. գարու մտաւորական վերազարթնումը՝ իր բանապաշտ միտումով, յոռեան աշխարհահայացքով, բնազդապաշտ և զօրապաշտ խմբումով, նիւթապաշտ իմաստասիրութեանը, մեզի տուաւ ուրիշ երկրորդ կարգէ ապրանքներու հետ միասին նաև պառակտուած և պարպուած եկեղեցի մը, և այլասերեալ բարոյասանութիւն մը:

Ի՞նչ է տառ դարձանը: Բեկեալ հայ կեանքը փրկելու միակ դարձանն է եկեղեցական բարեկարգութիւնը, որ ծրարական և վարդապետական ըլլալէ աւելի պէտք է հոգեւոր ըլլայ, ինչպէս որ կը շեշտեն կարգ մը գրողներ «Փալոս»ի մէջ: Իսկ այս հոգեւոր արթնութիւնը յառաջ կրնայ գալ «բարեկարգութեամբ եկեղեցականութեան», ինչպէս որ Գարեգին Եպս. կը յայտնէ իր մէկ խմբապետականին մէջ: Ահա հոս է բուն խնդիրը: Հայ թերթերու մէջ միշտ կը շեշտուի կարեւորութիւնը գարգացեալ կրօնականին, օժտուած բարձր ուսումնական կրթութեամբ, և աստուածաբանութեամբ: Պէտք է ըսել թէ այս շատ կանխորդ է, բայց բաւական չէ: Գլխաւոր, բանասէր կամ աստուածաբան կրօնականէն աւելի հոգեւոր առողջ կեանքի տէր եկեղեցականներն են որ պիտի բարեկարգեն Հայ Եկեղեցին:

Հայց. եկեղեցւոյ բարեկարգութեան շարժումը որ տակաւին զրահան արգելանքներ զրկէ չունեցաւ, ձախողութեամբ պիտի վերջանայ եթէ ան ընթացող միջոցներով մտաւորական ուղիէն, ինչպէս փորձած է ընել: Երբ իւրաքանչիւր եկեղեցականը հոգեւոր կեանքի և հաստատութեան սուրբ, մշտաբան վարարան մը ըլլայ, այն առեւն եկեղեցին պիտի բարեկարգուի և ժողովուրդային կեանքին մակարդակը պիտի բարձրանայ, քանզի հոգեւոր շարժում մը միայն հոգեւոր անձերով կը ծնի և կ'ապրի:

ՅՈՂՈՒԱՇՆԵՐ

ԸՆՏԱՆԻՔԸ ՍԻՐՈՅ ԳՊՐՈՑ

«Սիրոյ մէջ արմատացած և հաստատուած:»

Բ.

Ըսի նաև թէ աս ընտանեկան կեանքը, սիրոյ դպրոցը, մեզի նշմարել կուտայ երկինքը, յաւիտեանականութիւնը և շատ բնական է ասիկա: Երբ ընտանեկան յարկին տակ՝ սիրելը սովորութիւն կը դառնայ ամուսնանքի մէջ, ծնողաց, զաւակներու մէջ, եղբայրներու և քոյրերու մէջ, մահուան զաղափարը անհանդուրժելի կ'ըլլայ, ժամանակը անբաւական կուգայ, սիրոյ համար յաւիտեանականութիւն պէտք է: Սիր մը քիչ շատ անհաստ կնոջ մը հանդիպեցայ որ ինծի յայտարարեց թէ յաւիտեանականութեան զաղափարը զինք կը ստրապիւնէ և իր մէջ ամբողջ հոգիով ոչնչութեան կը բաղձայ: Շատ լաւ կը հասկնամ ասիկա, երբ մարդ սոսկ իրեն համար կ'ապրի: Այն եւր զոր Փառքալ «գարշիլի հո» կը կոչէր անհանդուրժելի կը գառնայ վերջապէս, և եթէ յաւիտեան անոր հետ պիտի ապրինք՝ չ'արժեք իսկապէս: Նկատած էք թէ այս եւր մեզի կը ներկայանայ նախ ծաղկաստանի մը նման, յետոյ շուտով կը փոխուի բանտի մը որ վաղակներ ունի-հոգ չէ

թէ ոսկեղօծ ըլլան անոնք-եւ հետզհետէ այնպէս երեւան կուգայ ան՝ ինչպէս որ է, գերեզմանի մը նման ուր մարդ չընչահեղձ կըլլայ:

Խնդիրը բոլորովին կը տարբերի երբ մարդ դուրս կուգայ իր անձէն և կ'ապրի սիրով, ուրիշներուն մէջ և ուրիշներուն համար, գտնելէն յետոյ այն Աստուածը որուն սիրոյն մէջ պէտք է արմատացած և հաստատուած ըլլանք: Յաւիտենակա՛նութեան համար է որ զիրար կը սիրենք եւ կ'ուզենք սիրել, և երբ մահը հասնի «Մնաք բարո՞վ» չէ որ կ'ըսենք, այլ՝ «ցտեսութիւն», թերեւ երբեմն պարզ նայուածքով մը միտոյն:

Փորձեցէք ըսել մահուամբ իրարմէ բաժնուող ամուսիններուն կամ իր զաւակը կորսնցնող մօր մը՝ թէ այդ բաժանումը մշտնջենական է. դուք անյուսուածեան մըլած կ'ըլլաք զանոնք, իրենց ամբողջ էութիւնը կը բողբէ, պէ՛տք է որ զիրար վերստին տեսնեն, ամէն գնով պէտք է որ զիրար վերստին գտնեն: Օր մը մահը անջատեց երկու գիւղացի ծեր ամուսիններ. ամուսինին բաժնուելէն ետքը իր ընկերուհին չուշացու անոր հետեւելու: Լսուեցան վերջին վայրկեաններուն սա խօսքերը որ կը կրկնէր ան. «Հայրիկը զիս կը կանչէ, պէտք է որ ես ալ երթամ իրեն քով», և քանի մը օր վերջը անոր քովն էր արդէն: Ոչի՛նչ այնքան դառնակսկիւծ և միանգամայն այնքան նշանակալից է որքան գերեզմանոցի մը այցելութիւնը: Շիրիմներու վրայ գտնուած երկար և յուզիչ տրձանագրութիւնները մեզի բաւական բան կ'ըսեն: Բոլորն ալ, զրեթէ առանց բացառութեան, բաժանումէն վերջ կրկին տեսութեան վրայ կը խօսին: Երբ լաւ կը սիրենք, յաւիտեա՛ն կը սիրենք: Հայր Կրաթրի իրաւունք ունէր ըսելու. «Կը սիրեմ և կ'ուզեմ ապրիլ, կը սիրեմ և պիտի ապրիմ»: Ահա՛ թէ ի՛նչ կ'ըսէ ընտանեկան կեանքը, երբ բնականօրէն է,

բոլոր անոնց որ սիրով արմատացած և հաստատուած են: Եւ, աղէ՛կ ուշադրութիւն ըրէք, այս բառը գրեթէ առաջ, Պօղոս առաքեալ կը խօսի այն ընտանիքներու մասին որ երկինքն են ու երկրի վրայ. «Հօրմէն (փաթեթ) է որ բոլոր ազգատոհմը (փաթիւ) երկինքի մէջ ու երկրի վրայ անուն կ'առնէ»: Ուրրմն ընտանիքը վաղանցուկ բան մը չէ, գեղեցիկ ցնորական երազի մը նման, ոչ ալ անապատի խուսափուկ կրկներեղթ մը, երբ ան սիրով արմատացած ու հաստատուած է:

Աւելին կայ: Ընտանեկան կեանքը պէտք է մեզի հասկցնէ սիրոյ ճշմարիտ բնայթը, որուն երեք յատկանիշներ պիտի տամ ես. —

Սէրը կը կայանայ մեր սիրածներուն երջանկութիւնը փնտռելուն մէջ:

Յետոյ, ան կ'արտայայտուի ազատ և ինքնաբոլոս ծառայութեամբ:

Վերջապէս, պէտք է ան հասնի մինչև հոգարեքութիւն:

Ան որ կը սիրէ, այն չափով որ կը սիրէ ճշմարտապէս, ան իր երջանկութիւնը չի փնտռէր այնքան՝ որքան ուրիշինը: Ա՛լ ինքզինքը նկատի չառնէր. իր սիրած էակին երջանկութեան մէջ կը գտնէ իր ամենամեծ երջանկութիւնը, անոր ապերջանկութիւնն է որ զինքը խորապէս կը տառապեցնէ, ու հետեւաբար միշտ կը խորհի թէ ինչպէ՛ս կրնայ զայն երջանկացնել ու զայն գերծ պահել ամէն տեսակ վիշտերէ: Ի՛նչ ուրախութիւն է տեսնել ժպտիլը մեր սիրածներուն, այդ ժպտը կեանքը կը պայծառացնէ և զայն տեսնողին սիրտը կը պարուրուի թոչուններու զայլայլիկով: Սիրած էակին լացը տեսնելը այնքան կը ճմլէ մարդու սիրտը՝ որ կ'ուզես անմիջապէս կարելի դնել այդ արցունքները զաղրեցնելու ու ժպտը հտ զարձնելու:

Յայտնի է որ այս բոլորը հակառակն է անոր որուն «սէր» անունը կուտան

աշխարհն ու ախտաւոր գրականութիւնը: Որքան յաճախ պոռնկացուցած են այս գեղեցիկ բառը, անոր ծաղրանկարին վերածած են վայն, զոր օրինակ այն անբարոյիկ նկարագրութիւններուն մէջ, ուր սէրը անձնասիրութիւն է պարզապէս իր ամենագոհիկ ձեւին տակ: Շքեղութիւնը, ամուսնական անհաւատարմութիւնը անկարելի բաներ են այն ամուսիններուն համար որ իրականապէս կը սիրեն զիրար, իր կենակցին սիրտը կոտրելու զազափարն իսկ ստրուռ կ'ազդէ: Իր ծնուցը տխրեցնելը, մօրը սիրտը կոտրելը, լսելը այն ինչ որ կ'ըսէր օր մը մայր մը. «Երբ իմ աղաս փոքր էր՝ իմ զգեստիս վրայ կը կոխէր, հիմա որ մեծ է՝ սրտիս վրայ կը կոխէ», բարոյապէս բնականօն տղոց համար այնքան հրէշային ու անգութ պիտի թուէր որ, մայրերը վշտացնելու զազափարն իսկ մտքերնէն չպիտի անցնէր: Նոյնը ընտանեկան բոլոր միւս յարաբերութիւններուն համար ալ:

* *

Կ'աւելցնեմ թէ այս սէրը կը յայտնուի ազատ եւ ինքնաբերութեան մէջ, որ այլեւս գերիի մը, թիապարտի մը կամ պարզապէս վարձկանի մը ծառայութիւնը չէ որը կը կայանայ ինք իրեն ծառայելուն մէջ՝ առաւելապէս զրամ չահելու համար. այլ՝ տարբեր ծառայութիւն մը, ազատ եւ ինքնաբերութեան միանգամայն, որ ուրիշ բան չէ եթէ ոչ բուն իսկ սիրոյ արտայայտութիւնը: Կը ծառայէ որովհետեւ կը սիրէ, կը ծառայէ որովհետեւ իր սիրածին ծառայելէ տարբեր բան չի կրնար ընել, եւ ծառայութիւնը ճշմարիտ սիրոյ արտայայտութիւնն իսկ է: Այս բանը չէ՞ որ կը յատկանշէր Որդին Մարդոյ, սիրոյ մարմնացումը, երբ կ'ըսէր, «Որդին Մարդոյ չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընելու եւ իր կեանքը շատերուն համար փրկանք տա-

լու: Ես ձեր մէջ ոպասաւորի մը պէս եմ»: Ան չէր բաւականանար միայն ըսելով, ան կը կատարէր ալ, ու կատարեց ամբողջ կեանքին մէջ, եւ զերազոյն ապացոյց մը տուաւ վերջին ընթրիքին՝ ռաքերնին լուալու համար ծունկի գալով իր իւրաքանչիւր աշակերտին առջեւ, նոյնիսկ Պետրոսին՝ որ զինք պիտի ուրանար, նոյնիսկ Յովային՝ որ համարուելով զինք պիտի մատնէր:

Բնականօն ընտանիքի մը մէջ բոլոր անդամները իրարու կը ծառայեն հաւասարապէս, եւ այս իրենց երանութիւնն է, փոխադարձաբար կը յարգեն զիրար եւ մէկգլխով հաճոյք պատճառել կ'ուզեն, զուշակելով իրարու նախասիրութիւնները, եւ այս ընելու ատեն մտքերնուն իսկ չանցնիր ստրկութեան զազափարը: —Սրտի պահանջ մըն է այդ, սիրոյ զըզոցին մէջ: Այս կեանքին հրապոյրը հոն է որ զիրար աւելի եւ միշտ լաւագոյն կերպով ճանչնալով՝ զիւրաւ կը զուշակեն թէ ինչպէս կրնան իրենց սիրածներուն ծառայել, ու այդ ծառայութիւնը կ'ընեն ամենայն յօժարութեամբ եւ խոնարհութեամբ: Ահա՛ թէ ինչ կը նշանակէ սիրով արմատացած եւ հաստատուած ըլլալ:» Ահա՛ իսկական սէրը, եւ իրաւամբ հոս վարը կ'սկսի երկինքը, վերի երկինքէն առաջ:

(Շար.)

Վ. ՊԵՆԱՆ

ԵԿԵՂԵՑԻՒ ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

ԱՍՍԻՉԵՑԻ Ս. ՖՐԱՆՉԻՍԿՈՍ

(1186—1226)

Մեր ներկայ ուսումնասիրութեան աւարկան է Ս. Ֆրանչիսկոս, որ Սափոնարօլայի պէս կաթոլիկ իտալացի մըն է եւ ծնած է 1181 ին Ասսիզի աւանին մէջ: Անոր հայրը հարուստ իտալացի վաճառական մ'էր եւ մայրը՝ Բիգա անուն ֆրանսացի կին մը: Քիչ վերջը պիտի տեսնենք որ անոր կեանքը եւ կազմակերպած շարժումը ամէնէն աւելի

այս երկու ազգերուն վրայ իրենց դրոշմը դրած են:

Ապագայսուրբը երբ ծնաւ՝ Ֆրանչիսկոս կոչուեցաւ իր հօրը կողմանէ, մանուկին ծնունդին միջոցին Ֆրանսազանուելուն համար, ուր կիրպատ ծախելու գացած էր: Հեղինակ մը այս նըշանաւոր սուրբին համար այսպէս կ'ըսէ. «Բարեկարգութենէն տաաջ ապրող սնունդին մէջ է՛ն փայլուն սուրբ աւետարանիչ մ'էր. պէտք է ան հաւատքի ջահակիրներուն մէջ դասուի:»

Ֆրանչիսկոսի կենսագրութիւնը մեզի համար աւելի ուշագրաւ եղած է, քանզի ան Սալփոնարօլայի կամ Պլենհանի պէս կրօնական մը չէր, այլ աշխարհական մը և ազնուական մը:

Իր երիտասարդութեանը միջոցին իր բնավայրին մէջ երիտասարդներու պետեն էր, անոնց հետ ասպետական կեանք կը վարէր, վայելելով ամէն տեսակ հաճոյքները: Այն տախտակները, գեղարդութիւնները երգելու, մետաքսէ և թաւիչէ հագուստներ հագնելու, նըւա գելու, ուտելու խմելու, խնճոյքներ սարքելու, գէնք գործածելու պէս բոլոր չուարճութիւնները վայելելու մէջ Ֆրանչիսկոս միշտ կ'առաջնորդէր իր ընկերներուն, որոնց կողմանէ իրը պետ կը փառաւորուէր: Իր շատ գեղեցիկ դէմքովը, գուարթ բնոյթովը, շէն սիրտովը, զրաւիչ նայուածքովը, համակրող հոգիովն և առատաձեռնութեամբը հագուստներ երիտասարդ մ'էր: Այսպիսի երիտասարդ մ'էր որ Աստուծոյ կողմանէ զարնուեցաւ և Անոր համար մեծ գործեր կատարելու ընտրուեցաւ: Ասպետներու առաջնորդը կարծես յանկարծ մեծ փոփոխութեան ենթարկուեցաւ և քիչ վերջը շատ մը կէտերու մէջ անոնց հակառակ եղող «չուանակիր» միաբաններու պետը եղաւ: Անոր ծաղկեղարդ թաղը գլխաւորեցի մը փոխուեցաւ, թաւիչէ հագուստը՝ քուրձէ պա-

րեզօտի, համադամ կերակուրը՝ չոր հացի և յաճախ անօթութեան: Քարայր մը կամ վանականի խուց մը անոր բնակարանը եղաւ փոխանակ հայրենի հանգիստ տունին:

Անոր կեանքին մէջ առաջին փոփոխութիւնը ծանր հիւանդութեան մը արդիւնքն էր. ան ինքնիրմէն դժգոհ ըլլալով խիզճի տաղնապի մը ենթարկուեցաւ: Երբ կազդուրուեցաւ իր բարեկամները խնճոյքի մը հրաւիրեց. բայց մինչ նարոտներով պսակուած անոնց հետ կը պտըտէր անոնցմէ բաժնուեցաւ և լուռ խոլումի մը մէջ ինկաւ: Ասկէ վերջ սկսաւ ամառի տեղերու մէջ իր ժամանակը աղօթքով և խոլումով տնցնել և աղքատներու հանդէպ մեծ համակրութիւն ցոյց տալ: Օր մը մուրացիկի մը հետ իր հաղուստը փոխեց և մինչև իրիկուն մուրացիկներու հետ պտըտեցաւ. այսպէս ընելով սրտին մէջ մեծ ուրախութիւն գգաց: Դէպ ի Հոգով ճամբորդութիւն մ'ուսնենալէ վերջ օր մը բոլոր ամուրացիկի մը հանդիպելու պահուն իր ձին խրաչեցաւ: Ֆրանչիսկոս երբ ճամբան շարունակելու կը միտէր հաղարձաւ, ձիէն վար իջաւ և համբուրեց վերաւոր ձեռքը բոլորտին, զոր առաջ գլուխը կը գտնէր, բայց հիմա այսպէս ընելով ուրախութիւն կ'զգար: Ասկէ վերջ սկսաւ իր ժամանակը զործածել ծառայելով բոլորտներուն և հիւանդանոցներուն:

Օր մը մինչ կործանած աղօթատեղիի* մէջ կ'աղօթէր կարծեց թէ Յիսուս խաչէն վար իջաւ և իրեն դպաւ. հոս հաւատքով Անոր նայեցաւ և փրկութեան արժանացաւ: Իր բոլոր կեանքին մէջ Քրիստոսի խաչելութիւն, Անոր չարչարանքն ու մահը առաջին տեղը կը զրաւէին իր սրտին մէջ: Այնքան առատա-

* Իտալիոյ մէջ փողոցներու անկիւնները խաչելութեան արձանին առջեւ աղօթելու տեղ կը գտնուի:

ձեռնութեամբ աղքատներուն դրամ կը բաշխէր որ հօրը հարստութիւնը փճանալու վտանգին ենթարկեց: Հայրը իր պաւակին այս վարժունքէն զժողո՛հ եղաւ, անոր խեղճ վիճակը տեսնելով ամէջաւ և պաշտօնապէս հոգակեց թէ ան որդիական իրաւունքներէն զրկուած է: Յըրանչիսկոս վրայի հազուստն իսկ հանելով հօրը տուաւ, ուսերուն վրայ միայն կրկնոց մը առաւ և ուրախ սրտով տունէն հեռացաւ: «Հիմա», ըսաւ ան, «Տիկ. Զբաւորութեան հետ ամուսնացայ. ասկէ վերջը իմ կինս ա՛ն պիտի ըլլայ:»

Մօտաւորապէս երեք տարի վերջին աստիճան թշուառութեան մէջ ապրեցաւ, միշտ օգնելով բորոտներուն և լքուածներուն, այս միջոցին աղօթքի ալ շատ ժամանակ կուտար: Կամաց կամաց սրիչներ ալ իրեն ընկերացան, և 1209 ին խումբին թիւը 12 ի հասաւ, որոնք Պապէն պաշտօնական արտօնութիւն ստացան գործելու և քարոզելու: Ահա այսպէս հիմնուեցաւ Ֆրանչիսկեան միաբանութեան հիմը:

(Շարունակելի)

ՏԻԿ. Ի. ՄԷՐԸԼ

ՄՈՎՍԷՍ ՈՐՄԷՐ ԱՌՍԻ ՕՐԷՆՔԸ

(Շար. և վերջ)

Յօդ. 112. Աւանդի մը կտրուելու պարագային՝ կարգ մը առարկաներուն համար եռապատիկ և ուրիշներուն համար հինգապատիկ հատուցում պէտք է ընել: Ելից 22. 7:

Յօդ. 128ը. ամուսնութեան և ամուսնալուծումի և շնութեան կը վերաբերի և կը համաձայնի հետեւեալ համարներուն հետ. Դև. 20. 10: Բ. Օրինաց 22. 22:

Փոխադարձութեան կանոն, — աչքի փոխարէն աչք, ակոսյի փոխարէն ակոսյ. Ելից 21. 24-27:

Աղքատի մը փնասին փոխարէնը կըրնայ զրամով հատուցուիլ: Եթէ մարդ

մը կուրի մը միջոցին ուրիշի մը կը գաւնէ և գայն կը վերաորէ, պէտք է երկունս թէ զիտուով չըբաւ, եւ բժիշկը քննելով վէրքը՝ վճիռ պիտի տայ: Ելից 21. 18-19: Յօդ. 215—223. Բժիշկը պիտի քննէ ունէ հիւանդութիւնէ և կըռիւէ յառաջ եկած վէրքերը և զրամական տուգանք պիտի որոշէ. հարուածներու համար նոյնիսկ ձեռքերը պիտի կտրուին:

Եթէ որմնագիր մը տուն մը շինէ, եւ տունը տանտիրոջ մէջը գտնուած առնկոթանելով գայն սպաննէ, որմնագիրը պիտի սպաննուի: Բ. Օրինաց 22. 8:

Իր հայրը հարուածող մարդուն մէկ ձեռքը պիտի կտրուի: Ելից 21. 15:

Հետեւեալ յօդուածին համեմատ այնպէս կը կարծուի թէ այդ առեւնները ստիկանական կազմակերպութիւն կար:

Յօդ. 109.— Երբ գինեվաճառ մը իր տունը հաւաքուած կարգ մը ռամիկները վտարած է կամ անոնց մասին կառավարական պալատին լուր տուած է, պիտի սպաննուի:

Ահաւասիկ ասոնք են ասկէ 4000 տարիներ առաջ զոյաթիւն բռնեցող օրինազրքի մը մի քանի ուշադրաւ յօդուածները, որոնք կարգ մը կէտերու մէջ ներկայ դարուս ողիին համաձայն են: Մեր մէջ յարգանք մը կը ծնի իշխանի մը հանգէպ, տեսնելով որ ան իր երկրին համար այսպիսի օրէնք մը կուտայ և իր հպատակները կ'երջանկացնէ:

Համուրապի իր օրինազրքին յառաջաբանին մէջ այսպէս կը գրէ. «Ես Համուրապի, մեծ արքայ և իմ աստուծոյս ծառան եմ. ես իմ երկրիս համար, գառախապի և ամբաստանեալի համար, պաշտօնեաներու և վկաներու համար, արգարութիւն հրամայեցի, որ անբարոյները մէջտեղէն վերցնեմ և խեղճերը պաշտպանեմ. քանզի ասոնք Արեւ աստուծոյն հաճելի են, և ինքը ասոնք յայտնեց ինծի:

Թէպէտ Մովսէսի եւ Համուրապիլի օրէնքներուն միջեւ նման կէտեր կան, չնմանող կէտերը շատ աւելի են:

Համուրապիլ ժողովուրդը երեք դասակարգերու, — ազնուական, աղքատ, ճորտ. — կը բաժնէ, եւ ասոնց միջեւ մեծ տարբերութիւն կը գնէ: Մովսիսական օրէնքին մէջ երկու դասակարգեր կան, որոնք իրարմէ քիչ տարբերութիւն ունին:

Համուրապիլի օրէնքին նպատակն է կառավարութիւն մը հաստատել եւ զայն ապահով պահել: Իսկ Մովսիսական օրէնքին նպատակն է նոր բարոյականութիւն մը եւ նոր կրօնք մը, այսինքն Աստուծոյ եւ մարդու միջեւ խաղաղութիւն եւ մերձեցում յառաջ բերել:

Համուրապիլի մէջ գատապարտութիւն եւ անսրտութիւն կայ, իսկ Մովսէսի մէջ ոչորմութիւն եւ զուլ: Սուղիներ կը չիշտէ իրաւունքը, իսկ երկրորդը՝ պարտականութիւնը:

Համուրապիլ իր օրէնքը «Շամաս»-ն, առարկայէն կ'առնէ, իսկ Մովսէս իրը կ'առնէ Աստուծոմէն, մէկ Անձէն:

Զանիկ ԵԱԿՈԲ ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ԹՈՅՆԵՐ ԵՒ ԹՈՒՆՍԻՈՈՈՒՄ

Բ.

Օր մը բարեկամ մը մեզի ստպէս քսաւ. «կ'ըսեն թէ տեսակ մը թոյն կայ, որ երբէք անմիջական ազդեցութիւն չունենար երբ զայն մէկուն տաս, բայց երեք չորս ամիս վերջ կ'սպաննէ այդ մարդը:» Այստիպի թոյն մը իրականին մէջ գոյութիւն չունի. բայց այնպիսի միջրոպային թոյներ կան, որոնք կամայ կամայ մարդը կը թունաւորեն առանց ունէ նշան մը ցոյց տալու, հետեւաբար առանց զանազան ունեցողին վիտակցութեան: Կան նաեւ այն տեսակ մանրէական թոյներ, որոնց ազդեցութիւնը յանկարծ եւ արագօրէն երեւան կուգայ: Սա ուժեղ եւ առողջ երախային նայէ,

յանկարծ երեւան կուգան փսխում, 41 աստիճան տաքութիւն, սառտիկ փորհարութիւն, ջղաձգութիւն եւ խիթեր: Ի՞նչ պատահեցաւ, ամառուան տաք եղանակին մանրէներով վարակուած կաթ խմեց. միջրոպները աներեւակայելի արագութեամբ աղիքներուն մէջ շաղցան, եւ անոնց թոյներով պղտիկը թունաւորուեցաւ: Փսխումը եւ փորհարութիւնը բնութեան կողմանէ կատարուած դարմանելու ջանքեր են, արտաքսելով թունաւոր եւ օտար նիւթերը: Խիթը ուրիշ բան չէ, այլ նոյն նպատակին ծառայելու համար աղիքներուն կատարած արտաժողով շարժումին արդիւնքը: Ջերմութեան աստիճանին բարձրանալը նոյնպէս բնութեան զործածած դարմանելու մէկ բարեբար կերպն է. մարդկային ախտերու մանրէները ամէնէն շատ կը սիրեն 37° տաքութիւնը, ուրուն տակ է՛ն արագ կերպով կրնան բազմանալ, ասկէ պակաս եւ աւելի աստիճաններով տաքութեան մէջ անոնք չեն կրնար լման զործունէութիւն ունենալ եւ բազմանալ: Ահա ճիշդ այս պատճառաւ է որ թոյնները որոնց տաքութիւնն է 42° եւ ձիերը, որոնց տաքութիւնն է 32° - 36°, հիւժախտէ զերծ կը մնան: Թմրեցուցիչ դեղերու միջոցաւ վերը յիշուած պղտիկին փորհարութիւնը, խիթը եւ փսխումը դադրեցնելու աշխատիլ, կը նշանակէ զայն զրկել բնական դարմանումէ եւ պատճառ զլալ անոր աւելի թունաւորումին:

Մանրէական թոյներու իրենց տեսակներուն թիւին պէս յառաջ բերած հիււանդութիւնները եւ անոնց ախտանշանները խիստ շատ են: Այս թոյներու միջոցաւ յառաջ կուգան կամազրկում, աւազրկում, գլխացաւ եւ գլխու պտոյտ, դող, ճապկտիլ եւ ջղային գալարումներ, ջերմ, փսխում եւ փորհարութիւն, ներքին եւ արտաքին տեսակ տեսակ վէճքեր, մարմին զանազան տեղերուն մէջ

թարախի և ջուրի հաւաքում, ուսիլ, կաթում, արտասովոր քրտինք, և այլն: Աշխարհի մէջ ծանօթ բոլոր թոյներու մէջ է՛ն սարսափելիներն ևն մանրէի թոյները: Կարկամախտի (թիթանօզ, տօնուճը) հիւանդութեան թոյնը շատ ազդու է. հասկցում է որ, ծրորինի (Սթրիքնին) նման բուսական շատ զօրաւոր թոյնին բժշկութեան մէջ գործածուած չափին մէկ հազարերորդ չափովը եթէ ասոր թոյնէն գործածուի՝ չօրաւոր երիտասարդ մը կարճ ժամանակի մը միջոյն կրնայ սպաննել:

Մարդ կրակին կը զպչի և կ'ալրի. մի քանի վայրկեան վերջը այրած տեղը, մորթին տակ ջուր մը կը հաւաքուի և այդ տեղը կ'ուռի: Ի՞նչ պատահեցաւ հոն.—մորթը ալրելով գէշ թոյնի մը փոխուեցաւ, չոր նօսրացնելու և անվնաս դարձնելու համար բնութիւնը անմիջապէս հոն ջուր հաւաքեց և այս կերպով ան դարմանելու կ'աշխատի: Այրած մորթին տակը հաւաքուող մի քանի կաթիլ ջուրը առ և մուկի մը մորթին տակ ներարկէ զայն, պիտի տեսնես որ կէս ժամ վերջ այդ մուկը զալարուելով պիտի մեռնի: Ասոր պատճառը այդ թոյնին պարունակած գէշ թոյնն է. ուրիշ խօսքով այրած միւսը, այսինքն խորովածը, եթէ մեր ստամոքսին մէջ զլտնուի մեզի համար շատ արժէքաւոր սնունդ մ'է, բայց եթէ ան մեր մարմնին արտաքին մասով յարաբերութիւն ունենայ և ուղղակի մեր արիւնի մէջ խառնուի մեզի համար սարսափելի թոյն մը կ'ըլլայ: Այրուածի հետեանքով մեռնողները այս կերպով թունաւորուելով մեռնող մարդեր են:

Այս տողերը ընթերցողները գիտեն թէ աշխարհիս վրայ այնպիսի մարդեր կան՝ որոնցմէ ոմանք կաթը, ուրիշներ հաւկիթը և ոմանք պանիրը չեն կրնար ուտել. և եթէ ուտելու ըլլան թունաւորումի ախտանշանները կը չուցնեն,

այսինքն փոխում, սաստիկ խիթ և փորհարութիւն կ'ունենան: Իշտպիսի մարդերը յիշեալ կերակուրներու միջոցաւ իրապէս կը թունաւորուին: Մինչև մօտերս այս իրողութիւնը անբացատրելի մնացած էր բժիշկներու համար վերոյիշեալ կէտերը ահա այս մասին՝ այ բաւականաչափ լոյս տուած են:

Կարգ մը մարդերու ստամոքսներուն մէջ հաւկիթ, կաթ և ուրիշ սնունդներ պատճառով մը անմարտելի կը մնան, և ասոնց մէջ անհրաժեշտ եւոզ քիմիական փոփոխութիւնները տեղի չեն ունենար. այնպէս որ այս սնունդները իրենց եղած վիճակովը իբր կաթ և հաւկիթ ուղղակի արիւնի մէջ կը խառնուին և թունաւորում յառաջ կը բերեն, ինչ որ երեւան պիտի գար եթէ կաթը կամ հաւկիթը մորթին տակը ներարկուելով ուղղակի արիւնի մէջ խառնուէին: Ահա այս պատճառով այս մարդերը այս կերակուրներու միջոցաւ կը թունաւորուին և հետեւեալք զանոնք չեն կրնար ուտել:

Գարունը արու ծաղիկներէն կամ ծաղիկներու արու մասերէն օդին մէջ քաղի սերմնափոշի կ'արտասփուի, որ միւսի տեսակէն նիւթ մ'է.—չնշառութեան միջոցաւ այս փոշին կարգ մը մարդոց թոքերուն մէջ մտնելով ուղղակի արիւնի մէջ կը խառնուի, և խոտի տենդ (հէյֆիլը) անուանով հիւանդութիւնը յառաջ կը բերէ. այս ուրիշ բան չէ այլ յիշուած տեսակէն թունաւորում մը:

Ինչպէս որ վերը յիշուեցաւ, բոլոր թոյներու մէջ մեզի համար է՛ն կարիւրները արտաքին թոյներ չեն, այլ ներքին այսինքն մեր իսկ արտադրած թոյներն են: Բայց խնդրին գէշ կողմը այն է որ մեր թոյները ընդհանրապէս անձայն և անզգալի կերպով, կամայ կամայ, 20—30—40 տարիներու միջոյն մէջ կը թունաւորեն: Մեր ներքին թոյնները հեռեւեալ երկու տեսակներէ կը բաղկանան:

Առաջին՝ այն թունաւոր կարգ մը աղե-
րը, որոնք մէջի և քրտինքի միջոցաւ
անպատճառ մարմինէն պէտք է արտաք-
սուին, բայց որոնք պէտք եղածին պէս
չարտաքսուելով ներս կը մնան: Երկ-
րորդ՝ այն թունաւոր նիւթերը որոնք ա-
պովառի միջոցաւ աղիքներէն դուրս
պէտք է հանուին, բայց որոնք պնդու-
թեան պատճառաւ չկարենալով արտաք-
սուիլ ներս կը մնան: Ահա այս կերպով
մէկ կողմէն աղիքներու մէջ ապրող ան-
թիւ մանրէներու թոյները, միւս կողմէն
ներսը հոտած կերակուրներու թոյները
տեւականօրէն մեկ կը թունաւորեն: Այս
քիչ առ քիչ անզգալի կերպով թունա-
ւորումի պատճառած աւերները աներե-
ւակայելի են: Այս թունաւորումն է մե-
ծագոյն պատճառը, որ մարդերը կը ծե-
րացնէ և անոնց կենդանական հիւս-
ուածքները կը մաշեցնէ: Անկասկածե-
լի իրողութիւն մ'է որ այս թունաւորու-
մը երակները կարծրացնելով կաթուածի,
շաքարախտի, սրտի և երկիւմունքի հի-
ւանդութիւններու պատճառ կ'ըլլայ և
այս կերպով մարդկային կեանքը վաղա-
հաս վախճանի մը կը հասցնէ: Եթէ մեր
թոյներովը չթունաւորուէինք 150—200
տարի ապրիլ մեզի համար շատ սովորա-
կան վիճակ մը եղած պիտի ըլլար:

(Տօքթ) Ա. ՃէՊէճեկն
(Շարունակելի)

ՎԱՐԴԱՆԱՆՑԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Բ.

Կրտսեպաշտ պարսիկը վճռած էր
Քրիստոնէութիւնը ջնջիլ հայոց մէջէն:
Մասնաւորաբար, ցնորամիտ և սնափառ
թագաւոր մը, շրջապատուած հայկա-
տակ և պնակալէզ քուրմերէ և նախա-
րարներէ, կը շահագործուէր իրր ծան-
ծաղամիտ խամաճիկ, գործիք դառնա-
լով այս վերջիններուն սագայիւական
մոլեռանդութեանց և յիմար ծրագիր-
ներուն:

Պարսիկք կ'ուզէին որ քրիստոնէու-
թիւնը վերնայ հայոց մէջէն, վերջ մը
դնելու համար հայկական անբաղձալի
վերադարձնումին և անկէ ծագում առ-
նելիք հաւանական վերականգնումի մը,
քաղաքական կեանքի տեսակէտով:

Գիտէին անոնք որ հայը՝ զրաջի աղ-
ուանքն և վրացիին վրայ ալ մեծ հե-
ղինակութիւն ունէր. որով եթէ սանձ-
ուէր հայկական զարդացումը և ջնջուէր
անոր կրօնը, պարսիկին համար դատը
շահուած էր: Իսկ հայը որ իր 582 տա-
րիներու Արշակունեաց անկախ թագա-
ւորութեան ջնջման հանգուրժեր էր,
ցնցուեցաւ, երբ հարուածը իր կրօնքին
դէմ սեղանուեցաւ. փրփրեցաւ ու փո-
թորկեցաւ այն, երբ պիղծ կռապաշ-
տութիւնը իր մրիող խանձողներով կու-
ղար հրոյ ճարակ ընել Հայաստանեայց
եկեղեցին և Յիսուսի Ս. Սեղանը:

Ժողովուրդը չուրի չէր խրախոյս
տուողներէ և միաթարիչներէ, բայց
ջղուտ, աննկատ և անձնազիր տռաջ-
նորդի մը կը կարօտէր. և Աստուած
ժամանակին համար մարգարէ մը հա-
նած էր, հովուելու համար իր հօտը:
Մեծն և Քաջն Վարդա՛նն էր այդ ա-
ռաջնորդ-մարգարէն, անկեղծ, ջերմե-
ռանդ և բիւրեղ հոգի մը, Սահակ Պար-
թեւի միամօր աղջկան Սահականոյչի և
Համապասպ Մամիկոնեանի գաւալը:

Վարդան, ծագումով և իշխանական
իրաւունքով երկրորդ երրորդ աստիճա-
նի իրաւասութիւն ունէր, հայ նախա-
րարներու մէջ, ինչպէս ինքն ալ կը հա-
տատէր իր բերնով, մեծ ճակատամար-
տին նախօրեակին ըսելով. «Մանաւանդ
զի բաւումք իձէնջ լաւադոյնք էք քան
զիս արութեամբ և զանա իլկն ըստ հայրե-
նի պատշոյն», որ ազատ թարգմանչու-
թեամբ «իշխանական աստիճանով ինձ-
մէ վերադաս շատեր կան ձեր մէջ» կ'ը-
սէ Սպարապետը, իր ընկեր դօրաժար-
նելուն ուղղելով խօսքը:

Հետեւաբար Վարդանի մէջ նշմարուած գերազանց անձնուէր և եղակակօրէն անշահախնդիր ոգին էր որ զինք բարձրացուցեր էր բանակին ընդհ. Սպարապետութեան աստիճանին, մինչ անդին, իրմէն առաջ այդ իրաւունքը ունեցողներ կային արդէն «ըստ հայրենի պատւոյն»: Եւ այդ անձնուէր ոգին քրրատոնէական հաշուադիւտ զեղումով մը ցոյց տուած էր Վարդան, անմիջական և ճակատագրական օգնութեամբը զոր կատարեց ան վրաց և աղուտնից երկրին մէջ պարսից դէմ մղուած կռիւներուն մասնակցելով, Հայ-Պարսիկ կըռիւէն ամիսներ առաջ, իր կեանքի օրինակովը հաստատելով թէ. «Սիրէ՛ դրացիդ քու անձիդ պէս» աւետարանական պատգամին հաւատարիմ աշակերտն էր թուէր:

Արդեօք ի՞նչ տեսակ օրինակ մը կըրնայ ըլլալ Վարդան, ներկայիս մեծ ու պզտիկ պետական քրիստոնեայ. . . առաջնորդներու, որոնք դաշոյն կը յետանին դրացիին վրիպ կտրելու և սուր կը ճօճեն հարեւանին ձեռքէն աղօթիքը խըլելու համար. . . :

Վարդան կրնար իր հարեւաններուն օգնութեան ձեռք չկարկառել և շահագործել այս պարագան, սակարկելու համար Պարսից մօտ անձնական շահեր, ապագայ փառքեր և նոյնիսկ գահեր: Չըբաւ զայդ Վարդան: Քրիստոնէութիւնը կը հաւածուէր զրացի երկրին մէջ, Քրիստոս կրկին կը խաչուէր հոն, Վարդանի համար ամէն նկատում, ակնկալութիւն, դիւանապիտութիւն, թեքում և պատհանապաշտութիւն վերջ գտած էր. Քրիստոսը պաշտպանել պէտք էր մոխրակրօն գրադաշտին դէմ. և ըրաւ այդ բանը, յաղթանակներ տանելով յաճախ:

Վարդան սպարապետ մը ըլլալէ աւելի զինուորեալ առաքեալ մըն էր, Քրիստոսի կրօնին պաշտպանութեան նուիրուած:

Երկու խօսք ալ Ե. դարու Հայ ժողովուրդին մասին: Ինչպէս նախապէս ըսուեցաւ, հայերը այդ շրջանին, շնորհիւ նորանոր գպրոցներու և զարգացման այլ միջոցներու, սերունդ մը ամբողջ դաստիարակութեան ճամբուն վրայ կարեոր քայլեր առնելով, զգալի յառաջդիմութիւն ձեռք բերած էին: Անոնց մէջ պակաս չէին այլեւս ի՞նչ և Լատին իմաստասիրութեանց, կրօնական և գիտական լուրջ մատենագրութեանց ծանօթ ազգային առաջնորդներ: Այսպէս ըլլալով պարագան, անոնք գիտցան ամէն բանի տալ իր իրական արժեքը և ամեն բան ղեկ իր իսկական տեղը, պարզ խօսքով, երբ անոնք զարգացած էին և աւելի լրջօրէն դաստիարակուած, չժաղրեցին կրօնը. . . անպէտ և երկրորդական զիրքի մը վրայ չզրկին քրիստոնէութիւնը. . . Ինչպէս կ'ընեն ներկայիս երկու բաւ և բան սորվող կոկողավիկ իմաստականք: Ընդհակառակը Ե. Դարու կրօն, զարգացեալ հայը գերապոյն տեղը տուաւ կրօնին և զայն անբաժանելի մասնիկը համարեց Հայ Հոգիին, «անքերթելի կաշին» նկատեց հայ մարմինին և անոր համար ստանձնեց զոհողութիւններ. գերապոյնը, լքեց կեանքն ու վայելքը, շէնն ու ապստը, «նորապսակ հարսը թողուց իր առագաստի սենեակը և նշանուած աղջիկը իր սէրն ու երիտասարդութիւնը մոռցաւ» և կոուեցա՛ն լիռներու մէջ, անտառներու խորերը և ծործորներու կողերը. . . կըռուեցա՛ն ունահատակուեցան. . . մինչեւ որ, աւելի քան երեսուն տարիներու մահու և կենաց ճակատագրական պայքարներէ վերջ, օր մը ստիպեցին պարսիկ զօրավար Նեիորը սատրապրելու թէ. «Քրիստոնէութիւնը ազատ է Հայաստանի մէջ. . . »:

Փառք ինկողներուն, փառք հանոնք այդ յաղթանակով պսակողին:

Հոյհայ

ՌԾՏՈՒՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ԿԵԱՆՔ

ՓԵՏՐ. ԱՄՍՈՒԱՆ ՀԻՒՐԵՐԸ

Փետր. ի կէսն ասդին ներկաթու-
թիւնը վայելցինք մի քանի կարեւոր
նոր գէմքերու. Մր. Ս. Փ. Հըրնարտ
«Ֆրէնտդ Ալ Սրմէնիա» ընկերութեան
պատուոյ գանձապահը, մանչ և աղջիկ
իր երկու զաւակներուն հետ Արեւելքի
մէջ կատարած իր անպաշտօն պտոյտին
միջոցին հանդիպեցաւ նաև Հալէպ, ուր
այցելից իր պատկանած ընկերութենէն
հովանաւորուած ազատագրեալ աղջիկ-
ներուն պատապարանը և կոյրերու վար-
ժարունը: Այժ բարեսէր և ազօթասէր
քրիստոնեայի հետաքրքրութեան ա-
ռարկաներն էին հայ գաղթականները և
հրեայ գաղութները, որոնք տեսնելու
համար Պաղեստին ուղեւորեցաւ: Հա-
լէպի մէջ և շուրջը պտըտեցաւ բոլոր
հայ գաղթականներու կացութիւնը ու-
սումնասիրելու համար:

Մր. Ր. Բաֆըտ, Եռնիւրն Աստու-
ծաբանական Ճեմարանի ուսանողներէն,
բայց ներկայիս Նիւ Եօքքի Լիկեյցիներե-
րէն մէկուն հովիւը, արեւելեան կրօն-
ները իրենց բնավայրերուն մէջ ուսում-
նասիրելու միտքով կատարած ուղեւո-
րութեան միջոցին հանդիպեցաւ քա-
ղաքս, և փետ. 17 ին խօսեցաւ Ալիզիէի
և Համիտիէի Հայ Աւետ. Լիկեյցիներու
Ե. Բ. Ջանից ընկերութեանց ժողովնե-
րուն մէջ ճիշդ նոյն նիւթին վրայ, ո-
րուն մէջ յորդորեց երիտասարդները հա-
ւատարիմ գտնուիլ իրենց անձին հան-
դէպ, ուրիշներուն հանդէպ և թոյլատու
ըլլալ, վերջապէս Քրիստոսի հանդէպ:
Իրիկունը խօսեցաւ Համիտիէի Հայ
Աւետարանական Եկեղեցիին սրահը
նիւթ ունենալով «Աշխարհի մեծագոյն
պէտքը»:

Փետ. 24 ի Կիրակին մեր մէջը ան-
ցուց Կեր. ՈՒՍ. Փէյթըն, Հնդկաստան
բնակող նախկին միսիօնար մը, ներկա-

յիս Միջազգային Միսիօնարական Խոր-
հուրդի քարտուղարը և «Ինթըրնէշնէլ
Միշնէրի Րիվիու» թերթին խմբագիրը:
Նոյն օրը զիշերուան ժամը 8 ին նա խօ-
սեցաւ Հնդկաստանի ներկայ կացու-
թեան և Կանտիի դերին մասին:

Հնդկաստանի մէջ, ըսաւ Մր. Փէյ-
թըն, տիրող ոգին է ազգայնականու-
թիւնը: Կանտի այս շարժումին էն ազ-
գեցիկ ղեկավարներէն եղած է: Հընգ-
կաստանի մէջ 200 միլիօն Հինտուներ
և 70 միլիօն Իսլամներ կան որոնք իրա-
րու ոխերիմ թշնամի են: Կանտի կը
հետապնդէ այս երկուքը հաշտեցնելու
քաղաքականութիւնը: Կայ նաև ար-
տաւնկերային դասակարգ մը, որոնք
պիղծ կը նկատուին և հետեւաբար մօ-
տեցող ուէ Հնդիկը պէտք է զգուշացնեն
իրենց դպչելէ հեռուէն պոռալով.
«պի՛ղծ, պի՛ղծ»: Կանտի կ'աշխատի
այս պատուարն ալ քանդել ազգային
միութիւն մը յառաջ բերելու համար,
օորկեցնելով թէ արտաւնկերայնու-
թիւնը Հինտու կրօնքին մէջ վերջէն մը-
տած օտար զաղափար մըն է: Եւ ա-
ռաջին քայլը առած ըլլալու համար
Կանտի որդեգրեց այս պիղծ դասակար-
գին պատկանող աղջիկ մը: Կանտի
կ'աշխատի իր հայրենիքը փրկել բարե-
կարգելով նաև անոր անտեսական
կեանքը: Հնդկաստան գերազանցօրէն
երկրագործական երկիր մըն է, իր մի-
լիօնաւոր գիւղերով: Բայց մեծ քա-
ղաքներուն մէջ հաստատուած են մեծ
գործարաններ: Պոմպէի բամբակեղէնի
գործարաններուն մէջ 500 հազարէն մէկ
միլիօն գործաւորներ կ'աշխատին: Գոր-
ծարաններուն գտնուած շրջաններուն
մէջ մանուկներուն հարիւրին 66ը կը
մեռնին: Կանտի կը ջատագովէ այն
զաղափարը թէ փոխանակ գործարան-
ներուն մէջ պատրաստուած հիւստու-
ծեղէնի տան մէջ գործածուած կտաւնե-
րով պէտք է հագուուտ շինել փրկելու

համար հնդիկ անտեսական ազգային կեանքը: Այս նաև պարզութիւն կը նշանակէ Կանտիի համար, որ սոսկալի հակառակորդն է արեւմտեան պերճասիրութեան և պարզութիւնը կը նկատէ հոգիի ազատութեան նշանը: Կանտի իր գործունէութեան իբր մեթոտ կը գործածէ ոչ-զիմագրութեան քաղաքականութիւնը, բայց զոր վերջերս ստիպուեցաւ ձգել: Կանտիի երիտասարդութեան վրայ ունեցած ազդեցութիւնը սկսած է նուազիլ. նոր սերունդին մ. ջ. Եւրոպական կրթութիւնը կը քանդէ աւանդական կրօնքը:

Քրիստոնեայ եկեղեցին Հնդկաստանի մէջ արտաընկերային դասակարգին մէջ իբր վերացուցիչ ազդակ գործօն գեր մը ունեցած է: Հնդիկ քրիստոնեաներուն մեծագոյն հարցն է միացեալ եկեղեցի մը յառաջ բերել: Հարաւային Հնդկաստանի մէջ այսպիսի միութիւն մը կտրիկի եղած է, եւ հիւսիսային մասին մէջ յաջող ջանքեր կը կատարուին:

ԿԵԱՆՔԻ ՊԵՅԼԱՆԻ ՄԷՋ

Պէյլանի մէջ կազմուած էր Հայ Միացեալ վարժարան մը, որուն մասին մեղի զրկուած մասնաւոր մէկ զրութենէն քաղուածաբար կ'ուտանք հետեւեալ տեղեկութիւնը. — Պէյլանի հայութիւնը, մօտաւորապէս 120 տուն, իր մէջ կը պարունակէ երեք ծանօթ կրօնական համայնքները, որոնք մինչեւ հիմա ունեցած էին իրենց սեպհական զպրօնները: Ժողովուրդը չկարենալով իր այս ուրոյն կրթարաններուն պէտք եղած ծախքը հոգալ, այնքան ալ զսհացուցիչ արդիւնքներ չէին տուած անոնք: Այս տարի Պէյլանի ազնուահոգի միւսթիւն, Մուհամմէտ Ալի Պէյի և մի քանի տեղական սյժերու ջանքերով կարելի եղաւ ոչ յարանուանական համազգային վարժարան մը ունենալ, որուն համար կառավարութիւնը

պետական ծախքով պաշտօնավարելու համար հրաւիրեց Տիար Սարգիս Ենի-Գոմշեանը, քիլիսցի լուսամիտ երիտասարդ մը (Հայ Առաք.): Հայ Հոգմէական համայնքէն Պէյլանցի Տիար Գրիգոր Մանուէլեան կը պաշտօնավարէ բարձր կերպով, իբր ֆրանսերէնի ուսուցիչ, որուն թոշակը կը վճարուի Հայ Առաք. և Հայ Կաթողիկ համայնքներէն հաւասարապէս: Հայ Աւետ. համայնքէն քիլիսցի Օր. Ռահէլ Պետեան կը պաշտօնավարէ իբր Անգլ. ուսուցիչ և մանկաբանի վարժուհի, որուն թոշակը կը վճարուի Հայ Աւետ. Միութեան կողմէն: Դպրոցի իբր շէնք կը գործածուին Հայ Աւետ. եկեղեցիին սրահ և զպրօնը: Աշակերտութեան թիւն է 100, որուն կէսը 5-7 տարեկան մանուկները կը կազմեն:

Ուրախ ենք որ այս գովելի ձեւերով յաջողութեամբ կը շարունակէ, բարեբար արդիւնքներ ունենալով ժողովուրդին մէջ: Տէր Ն. Հայր Տ. Սահփանեան, որ Պէյլան գացած էր տեղին թաղական մարմինը կազմելու եւ քահանայ ձեռնադրուելու համար ընտրելի մը անունը ստանալու, քարոզած է Հայ Աւետ. եկեղեցիի սրահը, հո՞ծ բաղմութեան մը ներկայութեան: Վարդանանցի տօնին քաթիւ հանդիսութիւններ կատարուած են Հայ Առաք. եկեղեցիի սրահը, ուր բոլոր հայութիւնը ներկայ գտնուած է: Պօրտի Միսիօնար Վեր. է. Փարթրիճ որ աւետարանչական պըտոյտի աւթիւ Պէյլան կը գտնուէր, հայերէն քարոզ մը տուած, Հայ Աւետ. քարոզիչ Պր. Յովհ. Շնորհօքեան և երկու ուսուցիչները խօսած, իսկ վարժուհին Օր. Ռ. Պետեան ջութակով նուագած է: Ժողովուրդը այս համազգային հանդիսութենէն ներշնչուած եւ խիստ գոհ ապուրոնութեամբ բաժնուած է:

ՀԱՆՐԱՊ, ԱԶԻԶԻՅԷ ՀԱՅ ՍԻԵՏ.

Եկե. Ի ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒԹԵՆԷՆ	
Ընտանիքներու թիւը	295
Եկեղ. անդամներ, էրեկմարդ	
119, կին՝ 168	287
Եկեղ. անդամներ 1928ին ըն-	
դունուած	21
Մկրտութիւն	36
Պսակ (անցեալ տարի 23)	16
Թաղում (10 կին, 9 էրեկմարդ, 5	
մանուկ)	19
Մանկանց Կ. դպրոցի աշակերտ	255
Ե. Ք. Ջ. ընկերութ. անդամներ	244
Եկեղեցիին նախակրթ. աշակերտ	210
Եկեղեցիին նախակրթ. ուսուցիչ	11
Աղջկանց Բ. վարժ. ի մէջ աշակերտ	52
Մանչերու Բ. վարժ. ի մէջ »	68
Այցելութիւն հովուական	549
Այցելութիւն սարկաւազներու	429
Այցելութիւն այցելու մասնա-	
խումբի կողմանէ	320
Տարեկան մուտք Օսմ. ոսկի 1,178.96	
Տարեկան ծախք Օսմ. ոսկի 1,14.713	
Մանկանց Կ. Դպրոցը կը բաղկանայ	
21 կարգերէ և կը կառավարուի 8 ու-	
սուցիչներու 16 վարժուհիներու կող-	
մանէ: 1928 Յունվ. Տին, քէմփի ե-	
կեղեցիին Կ. Դպրոցին մասնակցու-	
թեամբ Ազիզիյէ եկեղեցիին սրահին մէջ	
տեղի ունեցաւ հաւաքոյթ մը, ուր Տիկ.	
Ի. Մէրը ուշագրաւ նիւթի մը վրայ խօ-	
սեցաւ պղտիկներուն, որոնք գարդար-	
ուած էին գեղեցիկ բաւերով մակագրեալ	
ժապաւէններով: Ապրիլ 22 ին Կ.	
Դպրոցը սարքեց շատ գեղեցիկ հանդէս	
մը, և Դեկ. 30ին նոյնպէս մասնաւոր	
հանդէս մը տուաւ, երբ 10 աղջիկ և 20	
մանչ դպրոցականներ իրենց Կ. Դպրոցը	
աւարտած ըլլալով չափահասներու Կ.	
Դպրոցին կողմանէ ընդունուեցան:	
Եկեղեցիին Ե. Ք. Ջանից Միութիւնը	
կը բաղկանայ աղջկանց և մանչերու	
երկու ընկերութիւններէ, Տիկ. Ա. Փո-	
լատեան ընդհանուր վարիչն է. ընկե-	
րութիւնը ունի 9 անդամներէ բաղկաց-	

եալ Վարչութիւն մը, որուն ատենա-
պետն է Տիկ. Լ. Յովնանեան, Բ. ատե-
նապետ՝ Օր. Ս Նազարեան:

Գործնէութիւն.— Ներկայացում մը.
ձեռագործներու տօնաժամառ մը, ու-
րուն հասոյթը յատկացուեցաւ եկեղեցիի
շինութեան. այցելութիւն մը Ուրֆայի
Ասորի Բող. եկեղեցիին, նոր տարուան
առթիւ այցելութիւն անկեղանոցին, ուր
մէկ ժամու չափ իրենց Նո. էրենքով եւ
երգերով ուրախացուցին թշուառները:
Թէյասեղան մը՝ Մատակասկարի Մալ-
կաշ զինուորներուն: Տարեկան մուտք
եղած է (տօնաժամառի հասոյթով մի-
ասին) 3340 դրշ. ընթացիկ արժթ.:

Մանչերու բաժնին մէջ կան 126 ան-
դամներ, որոնց իբր ընդհանուր վարիչը
գործելու համար 1929 էն սկսեալ պաշ-
տօն ստանձնած է Պատ. Ա. Հափտեան:
Տիար Կ. Գըվըրեան Վարչութեան ատե-
նապետը եղած է: 1928ի միջոյնի աղ-
ջիկներու հետ վերոյիշեալ կէտերու մէջ
գործակցելէ զատ երիտասարդները ձը-
մանային դաստիարակութիւններու շարք
մը տուած են, և ունեցած են ձեռագիր
կրօնաբարոյական ամսաթիւրթ մը: Տա-
րեկան մուտք ունեցած են 1447 դրշ.
արծաթ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶԸ

ԳԱՆՃԱՐ ՊԱՊՈՒԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Պատուի գլուխը դառնալ սկսաւ. հա-
կառակ իր վեց տարուան կրթութեանը՝
իր վայրենիի արիւնը տակաւին ընտա-
նեցուցած չէր. խոշոր աւագակութիւն-
ներու վարժուած Քանճար ցեղին բնագղ-
նեցը կ'արթննային իր մէջ... աղամանդ-
ներ... ձեռքին մէջ... ոսկեղեն գարդեր
... դիւրաւ հարստանալ... որքա՞ն փա-
փաքելի բաներ էին, մասնաւոր երբ
ասանք բաղդատութեան կը գնէր իր
ներկայ միօրինակ տաժանելի կեանքին
հետ: Արդեօք այժմու նոր ապրելակեր-
պը ստուգիւ աւելի լա՞ւ էր, արդեօք ի-
րա՞ւ պարկեղտութիւնը ամենալաւ քա-
ղաքականութիւնն էր, արդեօք իր հայ-
րերուն, մեծ հայրերուն ու բոլոր Քան-

ճարներուն կեանքը իսկապէս չի տակ
կեանքը չէ՞ր: Իրաւ է թէ երիտաւարդ
Սահիպին պաշտած Աստուածը փափուկ
Աստուած մըն էր. բայց չէ՞ որ ինքը
Սահիպը սկիզբէն քրիստոնեայ և հա-
րուստ ծնած էր, ու չէր գիտէր թէ ինչ
ըսել է անօթի միայլ: Անիկա անօթու-
թիւնը անցնելու համար իրմէ աւելի հա-
րուստները կողոպտելու պէտքը չունէր:

Բայց Քանճարին համար խնդիրը աւ-
կէ որքա՞ն տարբեր էր:

Մինչդեռ Պապու այսպէս լուռ ֆը-
տած կը խորհէր. Մալիա՝ կարծելով թէ
իր խօսքերը բարերար ազդեցութիւն մը
ըրած էին, ըսաւ. «Ուրախ եմ որ առա-
ջարկութիւնս ընդունեցիր. Պապու:
Քեզի երբէք մնաս մը չի կրնար հասնիլ:
քեզ մինչեւ իսկ չեն հարցուփորձեր,
քանի որ ցարդ բարի վարք ունեցած ես,
անկէ զատ, սքառութ ալ ես»:

Պապու յանկարծ սթափեցաւ, մտքին
առջեւէն մշուշը փարատեցաւ: Այո,
սքառութ էր. եւ միթէ Սահիպը իրեն չէ՞ր
ըսած. «Կեցցե՛ս, Պապու, դու լաւ ըս-
քառութ մ'ես»:

Ուստի «Առաջարկութիւնդ չեմ կըր-
նար ընդունիլ», ըսաւ մեղմ ձայնով մը,
«Այո՛, ճիշդ այս պատճառաւ քեզի չեմ
կրնար օգնել. սքառութի օրէնքը ինծի
համար նուիրական է, չեմ կրնար կըտ-
րել զայն. և Սահիպին առջև ըրած խոս-
տումը չեմ կրնար կոտորել, ու չեմ ուզիր
կոտորել:

— «Ձեռ ուզե՞ր»:

«Ձեռ ուզե՞ր»:

Ուրեմն առ քեզի խոստում», ըսելով
Մալիա Պապու բերնին այնպիսի ք-
տակ մը իջեցուց որ ազան գետին գլո-
րեցաւ, երկրորդ ու ժգին հարուած մը հո
աչքին իջեցուց, և առանց ժամանակ
տալու որ ազան ինքզինք գտնէ, ոտքի
հարուածներով ազէկ մը ծեծեց զայն ու
թողուց գնաց:

Հետեւեալ օրը առտուն Պապու շատ

ճար էր ու նուազկոտ, բայց նորէն
գործին գնաց, որովհետեւ հակառակ պա-
րագային մէկ օրականը պիտի կորսնցը-
նէ՞ր. իր բարեկամներուն ծաղրէն շատ
չ'ազդուեցաւ, որովհետեւ թէ մարմնով
ու թէ մտքով այնքան կը տառապէր՝ որ
ուրիշներու ըսածին նայելու կամք չէր
մնացած իր մէջ: Ամէնէն շատ կը նեղ-
ուէր իր անճարակութեանը համար. եթէ
անակնկալի բերուած չըլլար՝ ինք ալ
կրնար իր կերած ծեծին չափ Մալիային
կերցնել, իւր Քանճարի արժանապատ-
ուութիւնը վերաւորուած կը զգար, ո-
րովհետեւ իր կերած ծեծը չէր կրցած տո-
կոսովը միտաին վերագարծնել: (Շար.)

ՓՈԽԱՆ ԸՆԿԱՆԱԳՐԻ

(ի հաշիւ 1929 ի բաժնեգրին)

Վեր. Հ. Կէօվպալայճեանէ, Տիքէյ-
թուր, Մ. Ն. 1.5 տուար, Վեր. Յակոբ
Շնորհօքեանէ Չահլէ, 7.5 սուրիական
ոսկի, Տիար Սահակ Շանլեանէ ձիւր ի
Շուղուր, 1.5 սուրիական ոսկի:

«ՆՈՐ ԱԽԵՏԱՐԵՐ» ԿԸ ՆՈՒՐԵՆ

Վեր. Յակոբ Շնորհօքեան Չահլէ,
Տիար Տ. Մեսրոպեանի, Լա Թրանշ,
Ֆրանսա, Տօքթ. Ա. Ժէպէճեան, Հա-
լէպ, Տիար Նէճիպ Ժէպէճեանի, Մ. Ն.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ջգսցում եւ Կրօնք ՏՐ. Ճ. ՄԵՐԸԸ
Բանապաշտութիւն եւ Հայ Առաք. Եկեղեցի
ՅՕԴՈՒԱՆՆԵՐ

Ընտանիք՝ Սիրոյ Դպրոց

Թրգ. Վ. ՊԵԿԵԱՆ

Ս. Ֆրանչիսկոս ՏԻԿ. Ի. ՄԵՐԸԸ

Մովսէս Խրմէ՝ Առաք. Օրհնիք

ՎԵՐ. ՅԿԲ. ՇՆՈՈՀՕՐԵԱՆ

Թոյներ եւ Թունաւորում

ՏՕԲԹ. Ա. ԺԵՊԵՃԵԱՆ

Վարդանանցի Խորհուրդներ ՌԵՏՈՒՆԻ

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻՐԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՃԸ

NOR AVEDAPER, B. P. 287, ALEP, SYRIE